

ՍՆՆԴԱՆՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՅԻՆ ԻՄԱՍՏՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Այս հոդվածի նպատակն է ուսումնասիրել հայերենի և անգլերենի դարձվածքների կազմում հանդես եկող սննդամուսնների խորհրդանշային իմաստները, դրանց միջև եղած նմանությունները և առանձնահատկությունները: Քննության մեջ հարկ ենք համարել օգտվել նաև առածների և ասացվածքների ընծեռած նյութից, քանի որ դրանցում ևս սննդամուսներն առկայացնում են իրենց խորհրդանշային իմաստները:

Լեզվական խորհրդանշանների ուսումնասիրության սկիզբը կապվում է Ա.Ա. Պոտեբնյայի անվան հետ: Նա հետազոտել է ռուսական ժողովրդական պոեզիայում խորհրդանշանների գործածումը և դրանց զարգացումը կապել լեզվի՝ որպես ամբողջության զարգացման հետ: Ըստ նրա՝ բառը հասկացության խորհրդանշանն է, հետևաբար խորհրդանշանների ծագումը անհնար է անջատել լեզվի կազմավորումից: Նա հետագա պարզաբանում է տալիս իր արտահայտած մտքին՝ ասելով, որ ցանկացած բառ իր խորքում հիմնված է պատկերի վրա, իսկ ցանկացած խորհրդանշանի հիմքում կա մի ավանդություն և պետք է միայն տեսնել այն¹:

Սննդանվան ստեղծած պատկերը, իր առաջացման և ձևավորման ընթացքում, առավել կամ պակաս պատահական բնույթ է կրում, այսինքն այն չի հիմնվում ճշգրիտ գիտելիքների վրա և տարբեր լեզուներ արտալեզվական իրականության միևնույն օբյեկտը տարբեր կերպ են իմաստավորում: Հարկ է նշել, որ սննդամուսների խորհրդանշական պատկերի առաջացման, զարգացման և կայունացման գործում մեծ դեր ունեն տվյալ լեզուն կրող ժողովրդի նախապաշարմունքները, հավատալիքները, կրոնական հասկացությունները, նրա ազգային մշակութային լեզվամտածողությունը: Ամիրածեշտ է ընդգծել, սակայն, այն փաստը, որ տվյալ լեզվում տվյալ սննդանվան հետ կապված զուգորդությունների առկայությունը կանխորոշում է նոր զուգորդությունների ուղղվածությունը, ինչպես նաև թելադրում տվյալ սննդանվան նկատմամբ լեզվակիրների վերաբերմունքը:

Դարձվածային միավորի կազմում սննդամուսը առավելապես վերացարկված ձևով է հանդես գալիս, ընդ որում նրա հետ կապված զուգորդությունները բավականին հեռացված են տվյալ սննդատեսակի բնական, հիմնական հատկանիշներից: Առկա է սննդանվան ստեղծած պատկերի

¹ А. А. Потебня, О некоторых символах в славянской народной поэзии, Харьков, 1860

փոխաբերական իմաստավորում: Այլ կերպ ասած դարձվածքի ամբողջական իմաստի կազմում սննդանունը մեծ մասամբ պահպանում է միայն իր հարանշանակությունները՝ հավելական իմաստները (կոնոտացիաները) և վերածվում է այս կամ այն հատկանիշի խորհրդանշանի:

Սննդանունները կարող են օժտված լինել երկու տիպի խորհրդանշային իմաստներով.

1. ինքնուրույնաբար գործածվող խորհրդանշային իմաստներ: Պրանք բառարաններում արձանագրված սննդանվան փոխաբերական իմաստներն են: Այսպիսի խորհրդանշային իմաստների առաջացումը Լ. Լենդյելը բացատրում է հետևյալ կերպ. սկզբում տվյալ լեզվական հասարակության կյանքում հայտնվում է առարկայական խորհրդանշանը, որը տեղի է ունենում ոչ լեզվական մակարդակում, այնուհետև այդ առարկայական խորհրդանշանը մուտք է գործում լեզվի մեջ և խոսքում լեզվական արտահայտություն է ձեռք բերում²: Պարզաբանելով ասվածը սննդանունների առնչությամբ նշենք, որ սկզբնապես որևէ սննդանուն տվյալ ժողովրդի մեջ գործածվում է որևէ այլ առարկա, առավել հաճախ մարդկային հատկանիշ ներկայացնելու համար ոչ լեզվական մակարդակում, այնուհետև այդ վերաիմաստավորումը լեզվական արտահայտություն է ստանում: Ինչպես օրինակ բառարաններում արձանագրված է «դղում» սննդանվան «դատարկազուխ, ապուշ» փոխաբերական իմաստը: Անգլերենում էլ «*peach*» սննդանունն ունի «գեղեցկուհի» ինքնուրույն փոխաբերական իմաստը:

2. խորհրդանշային իմաստներ, որոնք միայն որոշակի դարձվածքների և առածների ու ասացվածքների կազմում են առկայանում: Պրանք դարձվածայնորեն պայմանավորված խորհրդանշային իմաստներ են: Այսպիսի խորհրդանշային իմաստները, ըստ Ա. Վ. Գևորգյանի, ծագում և գործառնում են միայն լեզվում, որոնց գոյությունը որևէ բառի իմաստային համակարգում հնարավոր է պարզել միայն հատուկ քննության՝ իմաստային բաղադրիչների վերլուծելու միջոցով³:

Հարկ է նշել, որ միևնույն սննդանունը զուգադրվող լեզուներում գործածվում է այնպիսի խորհրդանշային իմաստներով, որոնց միայն մի մասն է համընկնում և հանդես է բերում բազմաթիվ, միայն այն լեզվին հատուկ խորհրդանշային իմաստներ, որոնք իրենց հերթին բացահայտում են ազգային մշակութային յուրահատուկ լեզվամտածողությունը: Սննդանունների կերտած հասկացություններում հաճախ հանդիպող ընդհանրությունները

² Л. Лендель, "Переносное значение" или "образное употребление" слов?, Лексикология и лексикография, М., 1972, ст. 68

³ Գևորգյան Ա. Վ., Բառի խորհրդանշային կիրառությունը լեզվում, «Սովետական մանկավարժ», 1989, N12, էջ 14-15:

թույլ են տալիս եզրակացնել, որ սննդամուկների պատկերավոր գործածումը դարձվածքներում գալիս է հնդեվրոպական ընդհանրության ժամանակներից:

Այժմ անդրադառնանք հայերենի և անգլերենի դարձվածքներում հանդիպող սննդամուկների խորհրդանշային - իմաստային վերլուծությանը:

Ջուրը, կենսականորեն ամենահրաժեշտ բանը, որն ապահովում է կյանքի գոյությունը, շատ հաճախ է հանդիպում երկու լեզուների դարձվածային համակարգում: Ջրի հավերժության, անմահության խորհրդանշական իմաստն են արտահայտում «աստծու ձեռքի ջուր» և «water of life» դարձվածքները (նշանակում են անմահական ջուր, կենդանացնող հրաշագործ ջուր):

Ջուգադրվող լեզուների դարձվածքներում «ջուր»-ը խորհրդանշում է ոգելից խմիչք: Ինչպես օրինակ՝

տաքդեղի ջուր - օղի

ծերմակ ջուր - բրբ. օղի

կարմիր ջուր - ծածկ. գինի

bubbly water - կտկ. փրփուրն գինի, «թշիկ»՝ շամպայն:

«Ջուր»-ը նաև անբովանդակ շատախոսության, անտեղի գործ կատարելու, իզուր ժամանակ վատնելու խորհրդանշային իմաստն է ձեռք բերում՝ հանդես գալով հայերենի և անգլերենի ՄԴԴ-ում: Ինչպես օրինակ՝

ջուրը սանդը դնել/ լցնել՝ ծեծել = ջուր ծեծել - խսկց. 1.

դատարկաբանել, ավելորդ, անօգուտ, անտեղի խոսել 2.

անօգտակար, իզուր աշխատանք կատարել

water bewitched - հեզն. շատ բառեր և քիչ միտք՝ ջուր

մաղով ջուր կրել - ապարդյուն, անօգուտ գործ բռնել

draw water in/ with a sieve - մաղով ջուր կրել, անօգուտ գործ

կատարել:

Աղը դարեր շարունակ եղել է և կմնա լայն սպառման ապրանք, առանց որի հնարավոր չէ պատկերացնել սնունդը: Նրա արդյունահանումը աշխատատար էր, բերվում էր այն հեռվից, հետևաբար թանկ արժեք: Սակայն ոչ աղի գինը, ոչ նրա արդյունահանման դժվարությունները, ոչ էլ համային որակներն են դարձել այս սննդատեսակի վերափմաստավորման հիմք: Վաղուց հայտնի էր աղի յուրահատկությունը՝ պահպանել մթերքները (հատկապես միսը) փչանալուց: Այստեղից էլ նրա հիմնական սիմվոլիկան: Այն հանդիսանում է մաքրության, կայունության, անմահության և հարգանքի խորհրդանիշ, այստեղից էլ կարևոր, անգնահատելի մարդու մասին խոսելիս՝ անգլիացիները նրան կոչում են «salt of the earth» - աստվծ. երկրի աղը, հասարակության ընտիր մասը, լավ, արժանի մարդու մասին ասում են՝ «(be) worth one's salt», իսկ հայերն էլ բարի, հյուրասեր մարդուն ասում են «աղ ու հացով մարդ»:

Աղի հատկություններից մեկն այն է, որ այն կարող է բորբոքել բաց վերքը, և դա խմաստի քաղցատալան զարգացման հիմք է հանդիսացել: Դրանից ելնելով է, որ հայերն ասում են «աղ ցանել վերքին»՝ նկատի ունենալով մորմոթել, բորբոքել վիշտը, ցավը, իսկ անգլիացիները նույն պատկերավոր խմաստը օգտագործում են "rub salt into one's/ the wounds" դարձվածքում:

«Աղ» սննդամուրը ունի սուր խոսք, սրամտություն խորհրդանշային իմաստը հետևյալ դարձվածքներում. Attic salt - ատտիկյան աղ - նուրբ սրամտություն, համով կատսել:

Հայերենում «աղ» սննդամուրը ունի նաև «համ» փոխաբերական իմաստը և ասելով՝ «աղը հանել» նկատի ունենք համը հանել, չափավորության, վայելչության սահմանից դուրս գալ, «լեզվին աղ անել» - քրք. խոսքը չափավորել, լռել, կամ՝ «խոսքի մեջ աղ չկա» ասելով՝ պետք է հասկանալ, որ խոսքն անհամ է, քովանդակալից չէ:

Հայերենի սննդամուրն պարունակող դարձվածքներում (այսուհետ՝ ՍՊԴ) «աղ» սննդամուրը նաև խորհրդանշում է օգնություն, ինչպես օրինակ՝

ծվին աղ ցանել - որևէ բանով մեկին օգնել, աջակցել,

ծառայություն մատուցել

մատին աղ անել - հնց. մեկին օգնել, որևէ բանով աջակցել,

ծառայություն մատուցել:

Անգլերենի ՍՊԴ-ում «աղ» սննդամուրը նաև հյուրասիրության խորհրդանշն է: Ինչպես օրինակ՝

eat a peck of salt with smb - աղուհաց կիսել մեկի հետ; լավ իմանալ, լավ ճանաչել մեկին:

Սննդամուրն պարունակող որոշ անգլերեն դարձվածքներում էլ «աղ» սննդամուրը գործածվում է որպես ապրուստի միջոցների խորհրդանշ: Բերենք նման օրինակներ՝

earn one's salt - ծրիակեր չլինել, իր հալալ վաստակն ուտել

not to earn salt for one's porridge - ապրուստ չվաստակել, հացի

փող չաշխատել:

Ընդհիվ անգլերենում շատ տարածված կոնվերսիայի երևույթի, երբ գոյականը կարող է (առանց որևէ ձևափոխության ենթարկվելու) գործածվել նաև որպես բայ, "salt" սննդամուրը խորհրդանշում է հավաքել, դիզել (փող), ինչպես օրինակ՝ salt away - խսկց. փող խնայել, հետ գցել սև օրվա համար:

Հացը, լինելով հիմնական սնունդ, նույնպես շատ է հանդիպում հայերեն և անգլերեն դարձվածքներում: Հարկ է նշել, որ այդպիսի դարձվածքների թիվը հայերենում գերակշռում է (հայերենում 89 միավոր, անգլերենում՝ 29): Դա պայմանավորված է նրանով, որ հայ մարդու կյանքում

շատ են եղել դեպքեր, երբ նա իր գոյությունը պահպանել է շնորհիվ հենց այդ կենսական սննդատեսակի:

«*Հաց*» սննդանվան հիմնական փոխաբերական-խորհրդանշային իմաստը ապրուստ, ապրուստի միջոցներ ցույց տալն է: Հետևաբար հայերենում «հաց աշխատել», անգլերենում՝ “make one’s bread” դարձվածքները նշանակում են ապրուստի միջոցներ վաստակել, գոյության համար փող աշխատել, իսկ «բերանի հացը կտրել» և “take the bread out of one’s mouth” դարձվածքները համապատասխանաբար նշանակում են մեկին ապրուստի միջոցներից զրկել:

«*Հաց*» սննդանվան խորհրդանշային իմաստներից մեկն էլ հյուրասիրությունն է և այս պատկերավոր իմաստն արտահայտելիս հաճախ միանում են աղն ու հացը՝ որպես հյուրասիրության խորհրդանիշ՝

աղ ու հաց կտրել/ուտել - հյուրասիրվել, միասին ուտել - խմել
eat smb’s bread and salt - ինչ-որ մեկի հյուրը լինել:

Հայերենում «հաց» սննդանունը ունի ևս երկու փոխաբերական խորհրդանշային իմաստ: Այն կարող է նշանակել.

1. եկամուտ - հաց ուտել - եկամուտ ստանալ
մեջը հաց լինել - եկամտաբեր՝ շահավետ լինել
հացով տեղ - եկամտաբեր պաշտոն
2. երախտիք - հացի մեջ աղ չլինել - երախտիքը չիմացվել, չգնահատվել
աղ ու հացին քոռ մտիկ անել - երախտամոռ, ապերախտ լինել:
Անգլերենում հաճախ է «*հաց*» սննդանունը միանում «*կարագ*» սննդանվան հետ և խորհրդանշում նյութական բարեկեցություն կամ շահամոլություն: Ինչպես օրինակ՝

have one’s bread buttered for life - մինչև կյանքի վերջ նյութապես ապահովված լինել

butter one’s bread on both sides /have one’s bread buttered on both sides - հացը երկու կողմից յուղել, ավելորդ շոայություն թույլ տալ.
ամեն առիթ օգտագործել իր շահի համար

know/see on which side one’s bread is buttered on - իր շահը լավ իմանալ, հաշվի առնել սեփական հետաքրքրությունները, առիթը ծեռքից բաց չթողնել

Իսկ հայերենի ՄՊԴ-ում «*կարագ*» սննդանունը միայն «*մեղր*» սննդանվան հետ է միանում՝ խորհրդանշելով համերաշխություն, մտերմություն և համաձայնություն: Հարկ է ընդգծել, որ դարձվածքներում նշված սննդանունների համատեղ հանդիպելը բացահայտում է սննդի ընդունման ազգային յուրահատկությունները.

մեղր ու կարագ դառնալ - իրար հետ բարեկամանալ, մտերմանալ

մեղր ու կարագով ուտել - ամենայն ուրախությամբ ընդունել առաջարկը, լիովին համաձայն լինել

Բացի վերը նշվածը, «կարագ» սննդամուկն անգլերենի ՍՊԴ-ում նաև շողոքորթության խորհրդանիշ է, ինչպես օրինակ հետևյալ դարձվածքում՝

lay the butter on - շողոքորթել, շատ գովել

«Յուղ/եղ» (oil) սննդամական իմաստների զուգադրումը հայերենում և անգլերենում բացահայտում է իմաստային մի շարք ընդհանրություններ և ընդհանուր խորհրդանիշեր: Այն մի դեպքում դրականի, մյուս դեպքում բացասականի խորհրդանիշ է: Դարձվածքներում նշված սննդամուկը գործածվում է.

1. որպես կաշառքի խորհրդանիշ, ինչպես օրինակ՝

բերանին յուղ քսել - խսկց. մեկին կաշառել, կաշառք տալ

դնչին յուղ քսել - խսկց. կաշառել, կաշառելով իր կողմը գրավել

oil of palms = palm oil - կաշառք

2. որպես ինչ-որ բան հրահրող կամ հարթող, հանգստացնող

երևույթի խորհրդանիշ

կրակի վրա/ կրակին յուղ լցնել/ ածել/ ավելացնել/ կաթեցնել - կրակն ավելի մեծացնել, սաստկացնել փխբ. կրքերը, իրավիճակը ավելի բորբոքել, մեկին զրգռել, վեճ, թշնամություն և այլն հրահրել, լարված հարաբերությունները սրել

add/ put oil to/ pour oil on the fire - կրակի վրա յուղ լցնել, կրքերը բորբոքել, գոտություն հրահրել, լարված հարաբերությունները սրել յուղ թափել (փոթորկած ծովի, ճահճի և այլնի վրա) - փխբ. հանգստացնել, խաղաղեցնել

pour oil on troubled waters - հանգստացնել, հանդարտեցնել, վեճը հարթել, ինչ-որ բան ասել զայրույթը իջեցնելու, խաղաղություն հաստատելու համար:

Այսպիսով, սննդամուկների խորհրդանշային իմաստները բխում են տվյալ սննդատեսակի նշանակությունից, համից, հոտից և տեսքից:

Քաղցրահամ ուտելիքների, հատկապես շաքարի ու մեղրի, անվամուկները երկու լեզվում էլ շատ քաղցր, ախորժելի բանի, սիրո և քնքշության, բայց նաև շողոքորթության արտահայտություններ են առաջ բերում:

յուղ ու մեղր դառնալ - խսկց. իրար հետ շատ սիրով լինել

լեզվի վրա շաքար ու մեղր դնել - շողոքորթել, քծնել, լեզվով սիրաշահել

sweet as honey - 1. մեղրի պես քաղցր (ուտելիքի մասին) 2.

շողոքորթ

bring sugar in one's spade - ամերիկ. շատ սիրալիկ լինել մեկի նկատմամբ (ինչ-որ բանի հասնելու նպատակով):

Սիմոնը լիմոնը, չնայած իր գեղեցիկ տեսքին և յուրահատուկ բուրմունքին, հայտնի է իր թթվությամբ և այդ հատկանիշով է դառնում փոխաբերության հիմք՝ հանդես գալով դարձվածքներում: Հետաքրքրական է այն փաստը, որ լիմոն սննդամուկը երկու լեզվի դարձվածքներում էլ բացասական պատկեր է ստեղծում.

մզած լիմոն - մարդ, որ իր բոլոր կարողությունները, ուժերը տվել է և այլևս օգտակար ու պետքական չէ

լիմոն քամել մեկի վրա - գերազանցել մեկին

hand smb a lemon - խսկց. խաբել, հիմարացնել մեկին

The answer's a lemon - Դա չեղավ, այդ համարը չի անցնի:

Հայերենի և անգլերենի ՍՊԴ-ում «խնձոր»/apple սննդամսվան իմաստների զուգադրումը ևս բացահայտում է իմաստային մի շարք նմանություններ և ընդհանուր խորհրդանիշեր: Հիմնականում այն բացասական խորհրդանշական իմաստներ է արտահայտում, սակայն որոշ դարձվածքներում նաև դրական խորհրդանշական իմաստ է ծեռք բերում: Որպես բացասականի խորհրդանիշ՝ «խնձոր» սննդամուկը խորհրդանշում է գծտության, ինչպես օրինակ՝

խնձոր գլորել - տարածայնություն, գծտություն ամառացնելու նպատակով, բանասարկությամբ մի հարց արծարծել, մի առաջարկություն անել

the apple of discord - դից. կռվախնձոր:

Հայերենի ՍՊԴ-ում «խնձոր» սննդամուկը գործածվում է նաև որպես գայթակղության խորհրդանիշ՝

եղենական խնձոր - գայթակղության պատճառ, առիթ:

Անգլերենի դիտարկվող միավորներում «խնձոր»-ը գործածվում է որպես շողոքորթության, կաշառքի խորհրդանիշ: Ինչպես օրինակ՝

an apple for the teacher - կաշառք բարձր պաշտոնյային

polish the apple - շողոքորթել, քծնել, փորձել ինչ-որ մեկի բարեհաճությունը քծնանքով հաճոյախոսությամբ շահել

Որպես դրականի խորհրդանիշ՝ այն սիրելի մարդ կամ որևէ դրական, լավ բան է խորհրդանշում՝

apple of one's eye - աստվծ. աչքի լույս, սիրելի մարդ

she'll be/ it's apples - ամեն ինչ լավ կլինի, ամեն ինչ լավ է

խնձորը զարկել/ խփել մեկին - որևէ տղամարդու հավանել, ընտրել որպես նշանած

կարմիր խնձորին քար գցել - ասվում է այն դեպքում, երբ մարդիկ աչք են գցում մի լավ, պիտանի բանի և ձգտում տիրանալ դրան:

«Լոբի»/bean սննդամսվան իմաստային վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ հայերենի դարձվածքներում այն բացասական խորհրդանշական

իմաստներ է արտահայտում: Այն բացբերան, հիմար, անշնորհք ու անճարակ մարդու խորհրդանիշ է, ինչպես օրինակ՝

բեր(ա)նին/ բերանում լոբի չի թրջվի/ չի մնա - բացբերան է, գաղտնիք պահել չգիտե

լոբի ուտող/ կերած - խսկց. հիմար, անշնորհք, ապաշնորհ, ձեռքից բան չեկող մարդ

Անգլերենի ՍՊԴ-ում "bean" (լոբի) սննդամուկը իմաստային ավելի մեծ բազմազանություն է դրսևորում: Այն խորհրդանշում է.

1. գաղտնիք

spill the beans - ամերիկ. խսկց. գաղտնիքը լեզվից թռցնել

2. դրամ

not to have a bean - խսկց. գրոշ, քոռ կոպեկ չունենալ

3. խելք, ուղեղ

use one's bean - ծածկլ. մտածել, դատել. ուղեղդ օգտագործիր, չարժիր

know beans - խելքը գլխին լինել, հասկանալ սեփական շահերը, ջոկել լավն ու վատը

4. ծեծ, պատիժ

give smb beans - խսկց. պատժել, ծեծել

5. հաջողություն

find the bean in the cake - հաջողություն ունենալ, բախտը ժպտալ (հատկապես լոտո շահելու մասին)

Եփված ուտելիքները և ճաշերը մույմպես մման համեմատությունների հիմք են հանդիսանում: Դրանք հատկապես խճճված, բարդ իրավիճակների խորհրդանիշ են, ինչպես օրինակ՝ "stews and soups" ասելով՝ պետք է հասկանալ բարդ, խճճված իրադարձություններ, գործեր, իսկ «շիլափլավ անել» դարձվածքը նշանակում է իրար խառնել, տակնուվրա անել:

Այժմ անդրադառնանք զուգադրվող լեզուների սննդամուկների յուրահատուկ խորհրդանշական իմաստներին:

Անգլերենում "cheese" (պանիր) սննդամուկը խորհրդանշում է ծնկակալ ողջույն, ինչպես օրինակ.

make cheeses - ռևերանս անել, ողջունել (առաջացել է խաղի տեսակից, որի ժամանակ աղջիկները պտտվելով արագ նստում են այնպես, որ չըջազգեստը գետնին փռվի զանգակի նման)

"Carrot" (զագար) սննդամուկը պարզև կամ առավելություն է խորհրդանշում, օրինակ.

carrot and stick - համոզելու մպատակով միաժամանակ և պարզև խոստանալ, և սպառնալ

"Raspberry" (ազնվամորի) սննդամուրը խորհրդանշում է անհավանություն ինչ-որ մեկի ասածին կամ-արածին, արհամարհանք, ինչպես օրինակ.

give/ blow smb a raspberry - չփացնել (արհամարհանք կամ հակակրանք գույց տալ, առտահայտել)

"Gooseberry" (փշահաղարջ) սննդամուրը խորհրդանշում է կողմնակի անձ հատկապես սիրահարների միջև: Այս խորհրդանշական իմաստն արտահայտված է հետևյալ դարձվածքում.

play gooseberry - քաղաքավարության՝ պատշաճության համար սիրահար զույգին ուղեկցել, որպես վարագույր քողարկել սիրահարներին

"Cherry" սննդամուրը հաճելի և ցանկալի ինչ-որ բանի խորհրդանշիչ է, ինչպես օրինակ՝

bowl of cherries - հաճելի վայր, հեշտ աշխատանք, հեշտ կյանք, զվարճալի իրադրություն

cherry on the cake - գրավիչ, ցանկալի, գոհացնող, բայց ոչ անհրաժեշտ լրացում մի բանի, որն արդեն բավականին լավն է:

"Cake" սննդամուրը միաժամանակ խորհրդանշում է և բավականին լավ կամ հեշտ բան, որն արժե ծեռք բերել, և հանդիսանում է քացասականի խորհրդանիշ, այսպես օրինակ.

take the cake - 1. առաջին տեղը գրավել, մրցանակ շահել, բոլորից լավը լինել 2. ամենավատը լինել, հանդուգն, անպատկառ լինել; չափազանց զվարճալի, զարմանալի կամ զայրացնող լինել

a piece of cake - 1. շատ համեղ բան 2. շատ հեշտ բան

"Cake" սննդամուրն ունի ևս երկու փոխաբերական խորհրդանշային իմաստ: Այն է՝

1. եկամուտ

get/ want a slice/ share of the cake - եկամտի, շահույթի իր մասը ստանալ կամ պահանջել

2. դրամ

the cake is getting thin - ծածկել, փողը/ս վերջանում է

"Peanut" (զետնանուշ) սննդամուրը «չնչին գումար» խորհրդանշական իմաստն է արտահայտում, որն արտացոլված է ստորև ներկայացվող դարձվածքում.

pay peanuts - չնչին գումար վճարել

Ի հակադրություն *"peanut"* սննդամուրն *"plum"* սննդամուրը դրականի խորհրդանիշ է: Այն ըստ Բրեվերի՝ 17-19-րդ դարերում ծածկալեզվի տերմին էր և խորհրդանշում էր £100.000 գումար⁴: Հենց դրանով է

⁴ Brewer's dictionary of phrase and fable, New York, 1968, p. 710

պայմանավորված նրա դրական իմաստային զարգացումը, այն է՝ ընտիր, պատվաբեր բան, որն արժե ունենալ:

get a plum - պաշտոնը բարձրանալ

plum job - խսկգ լավ վարձատրվող աշխատանք

"Peach" սննդամուկը ևս դրականի խորհրդանիշ է և արտահայտում է առաջնակարգ, հիանալի որևէ առարկա կամ անձ: Այս խորհրդանշական իմաստն է ընկած ստորև, ներկայացվող դարձվածքի հիմքում:

(be) peach of a smth - խսկգ. բացառիկ, շատ լավ, բարի կամ հրապուրիչ անձ կամ առարկա (լինել)

Անգլիայում "nut" (ընկույզ) սննդամուկը խենթության խորհրդանիշն է համարվում, քեև դա ոչնչով չի բացատրվում:

drive someone nuts - sl. խենթացնել ինչ-որ մեկին

off one's nut - sl. խենթ, խելագար

"Pepper" (պղպեղ) սննդամուկն իր յուրահատուկ կծու համի պատճառով բացասական խորհրդանշական իմաստների հիմք է տվել: Այն խորհրդանշում է դյուրագրգռություն, դյուրաթոթոթություն:

take pepper in the nose - հնգ. զայրանալ, բարկանալ, նեղանալ, վիրավորվել

"Meat" (միս) սննդամուկը խորհրդանշում է որևէ բանի հիմնական, կարևոր մասը, բովանդակությունը, էությունը: Այս խորհրդանշական իմաստն է կազմում "a book full of meat" (բովանդակալից գիրք) դարձվածքի հիմքը:

Զննելով հայերենի ՄՊԴ-ում հանդիպող սննդամուկների խորհրդանշական իմաստները՝ վեր ենք հանել միայն հայերենի սննդամուկներին հատուկ հետևյալ խորհրդանիշերը:

«խմոր» սննդամուկը խորհրդանշում է որևէ վատ, տհաճ բան, վեճ առաջացնող պատճառ, ինչպես օրինակ.

ջուր վերցնող *խմոր* - մեծ դժվարությամբ, գլխացավանքից, վեճերից հետո գլուխ եկող, լուծվող հարց, խնդիր

Այս *խմորը* դեռ շատ ջուր կվերցնի - դա շատ խճճված ու բարդ հարց է, դեռ շատ վեճ ու աղմուկ է լինելու, դեռ շատ բաներ են բացահայտվելու

«Ձմերուկ» սննդամուկը հղի լինելու խորհրդանիշ է, և այս իմաստն է ընկած «ձմերուկ կուլ տալ» (խսկգ. հղի, պատճառավոր լինել) դարձվածքի հիմքում:

«Սունկ» սննդամուկը հայերենում ունի նաև սերունդ, զավակներ խորհրդանշական իմաստը, որն արտացոլված է ստորև ներկայացվող դարձվածքում սունկ աշխարհ գցել - բրբ. որդիներ ունենալ, սերունդ թողնել:

«Սխտոր» սննդանունն արտահայտում է «ավելորդ խրատ» խորհրդանշական իմաստը, ինչպես օրինակ.

զլխին սխտոր ծեծել - ավելորդ խրատներով ծանծրացնել

Ինչպես նկատում ենք, անգլերենի դարձվածքներում հանդիպող սննդանունները, հայերենի դարձվածքներում գործածված սննդանունների համեմատությամբ, իմաստային յուրահատուկ խորհրդանշների առումով բազմազանություն են դրսևորում:

Հաճախ սննդանուն բաղադրիչը կարող է առկայանալ իր խորհրդանշային իմաստներից որևէ մեկով, որը կարելի է ներկայացնել երկակի՝ էքսպլիցիտ և իմպլիցիտ ձևով: Սննդանունը էքսպլիցիտ նշանակություն ունի այն դեպքում, երբ ոչ սննդանուն բաղադրիչը գործածվում է իր ուղիղ իմաստով: Ինչպես օրինակ՝

as brown as a berry - արևահար, արևից թխացած, արևայրուքով քիթը մասուր դառնալ - կաս-կարմրել

Այս դեպքերում սննդանվան դերն ու պատճառաբանվածությունը ընդհանուր միավորի իմաստի ձևավորման մեջ միանգամայն որոշակի է. սննդանունն իր մեջ ընդգրկում է դարձվածքի փոխաբերական իմաստը և դրանով իսկ դառնում տվյալ միավորի իմաստային կենտրոնը:

Երբ սննդանվան խորհրդանշային իմաստը իմպլիցիտ՝ ներակա է ներկայացվում, դրա բացահայտման համար անհրաժեշտ է լինում դիտարկել տվյալ միավորը նույն սննդանունով ձևավորված այլ դարձվածային միավորների հետ կապի մեջ: Սննդանուն բաղադրիչի իմպլիցիտ խորհրդանշային իմաստը կարող է համընկնել տվյալ սննդանվան ինքնուրույն խորհրդանշային իմաստներից մեկի հետ: Այդ դեպքում ավելի հեշտ կլինի բացահայտել սննդանուն բաղադրիչի իմաստային կարևորությունը, քան այն դեպքերում, երբ սննդանվանը հատուկ է դարձվածաբանորեն պայմանավորված ներակա խորհրդանշային իմաստ: Այսպես, օրինակ, *հաց աշխատել*, *հացը գտնել*, *հացը խլել* դարձվածքներում գործ ունենք «*հաց*» սննդանվան խորհրդանշային իմաստներից մեկի հետ, այն է՝ ապրուստի միջոցներ: Իսկ հետևյալ անգլերեն դարձվածքներում *know beans*, *know how many beans make five*, *not to know beans*, *use one's bean* էլ գործ ունենք «*bean*» բառի խելք, ուղեղ խորհրդանշական իմաստի հետ:

Սննդանուն պարունակող որոշ դարձվածքներում էլ դժվար է որոշել սննդանվան իմաստային կարևորությունը, քանի որ այդ դեպքերում սննդանունն ինքնուրույն իմաստային նշանակություն չունի: Այս երևույթը նկատելի է այն դեպքերում, երբ դարձվածքին հատուկ է ամբողջական իմաստ, որը չի բխում բաղադրիչների իմաստներից: Այս դեպքում ամբողջ

միավորի պատճառաբանվածությունը անհասկանալի է, սակայն սննդանվանը հատուկ է իմպլիցիտ խորհրդանշային իմաստ⁵: Ինչպես օրինակ.

գլխով տանձ կշռել - խսկց. նստած տեղը քնել, ննջելիս գլուխը վեր ու վար անել, դանթել

վանքի հաց ուտել - հիմարանալ

cut a pie - ամերիկ. խառնվել, քիթը խոթել ուրիշի գործերի մեջ

cry roast meat - բոլորին պատմել իր հաջողության մասին

Այսպիսով, սննդանունների իմաստային առանձնահատկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ իմաստային պլանում դարձվածային միավորի՝ որպես ամբողջի, և նրա բաղադրիչի՝ որպես մասի, միջև որոշակի փոխազդեցություն և փոխներգործություն կա, այսինքն դարձվածային միավորի ամբողջական իմաստն ազդում է սննդանվան իմաստի վրա և նրանում որոշակի փոփոխություններ, խորհրդանշական իմաստներ առաջացնում, սննդանուն բաղադրիչն էլ իր հերթին է զգալիորեն ազդում դարձվածային միավորի վրա և պայմանավորում նրա իմաստը: Իսկ դարձվածքների կազմում հանդես եկող սննդանունների խորհրդանշային իմաստների վերլուծությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ այն թույլ է տալիս բացահայտել տվյալ ժողովրդի ազգային-մշակութային յուրահատուկ լեզվամտածողությունը:

Բառարաններ

1. Brewer's dictionary of phrase and fable, New York, 1968
2. Oxford Advanced Learner's Dictionary, Ox. Univ. Press, 1999
3. Cowie A. P., Mackin R., McCaig I. R. "Oxford Dictionary of Current Idiomatic English", Oxford Univ. Press, 1984
4. Partridge Eric "A dictionary of English Catch Phrases", London, 1986
5. Seidl J., McMordie W. "English Idioms and How to Use them", M., 1983
6. Spears A. Richards, American Idioms Dictionary, Lincolnwood, Illinois, 1991
7. Սամանգուլյան Յ. Ա., Անգլերեն - հայերեն բառարան, Երևան, 1984
8. Բաղիկյան Խ. Գ., Ուսումնական դարձվածաբանական բառարան, ԵՊՀ. Ե., 2002
9. Ղանալանյան Ա., Առանձին, ԳԱ հրատ., Երևան, 1960
10. Սեֆերյան Ս.Ս., Հոլիանդիսյան Լ.Վ., Լազարյան Ա.Ա., Անգլերեն-հայերեն դարձվածաբանական բառարան, Երևանի համալս. հրատ., 1986
11. Սուքիասյան Ա. Ս., Գալստյան Ա. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975
12. Кунин А. В., Англо – русский фразеологический словарь /в двух томах/ Изд. "Совет. энциклопедия", М., 1967
13. Маккай А., Боткер М. Т., Гейтс Дж. И., Словарь Американских Идиом /более 8000 слов и выражений/, изд. "Лань", Санкт – Петербург, 1997

⁵ Геворкян А. В. "Семантика, структура и происхождение фразеологических единиц с зонименами", авторефер. дис. на учен. степ. канд. филол. наук, Ереван, 1990, ст. 11-13